# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<27>> դեկտեմբերի 2021թ. N ՄՈ/650-2021

ք. Արմավիր

### ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԵՎ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՉՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՕՐԵՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի N 1287-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 9-րդ, 18-րդ, 27-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանի 2021 թվականի դեկտեմբերի 24-ի դիմումը.

**ո ր ո շ ու մ ե մ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանին տրամադրել 2020-2021 թվականների աշխատանքային տարվա արձակուրդի մասը՝ 2021 թվականի դեկտեմբերի 30-ից 2022 թվականի հունվարի 3-ը ներառյալ՝ 2 աշխատանքային և 1 տոնական օր տևողությամբ:
2. Արամ Հովհաննիսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի պետ Նաիրա Մարտիրոսյանին:
3. Արամ Հովհաննիսյանին աշխատանքի մեջ համարել 2022 թվականի հունվարի 4-ից:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանի 2020-2021 թվականների արձակուրդի չօգտագործած մասը՝ 20 աշխատանքային օր տևողությամբ, տեղափոխել և տրամադրել 18 ամսվա ընթացքում՝ սկսած այն աշխատանքային տարվա վերջից, որի համար մասնակի է հատկացվել ամենամյա արձակուրդը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Недействительная подпись

X

VERIFIED OCSP 27.12.2021 18:34:35 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ